Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 3

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Քննաթերթ

Հարցեր 1-25	*50 միավոր*
Խնդիր 1	*15 միավոր*
Խնդիր 2	*10 միավոր*
Խնդիր 3	*15 միավոր*
Խնդիր 4	*10 միավոր*
Ընդամենը	***100 միավոր***

Հունվար, 2026թ.

Հարցեր 1-25

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. Նշվածներից ո՞րը քաղաքացիական իրավունքի սկզբունք չէ.

ա) պայմանագրի ազատության
բ) կամքի ինքնավարության
գ) կամայականության արգելքի
դ) խախտված իրավունքների վերականգնման ապահովման:

2. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.

ա) Գույքը վարձակալության հանձնելը հիմք է այդ գույքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների դադարեցման համար
բ) Գույքը վարձակալության հանձնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար
գ) Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ երրորդ անձինք չեն կարող ունենալ իրավունքներ
դ) Գույքը վարձակալության հանձնելը հիմք է այդ գույքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների փոփոխման համար:

3. Պետական փոխառության պայմանագրով՝ որպես փոխատու հանդես է գալիս.

ա) համայնքը
բ) քաղաքացին կամ իրավաբանական անձը
գ) Հայաստանի Հանրապետությունը
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

4. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.

ա) իրավաբանական անձի հիմնադիրը պատասխանատու է իրավաբանական անձի պարտավորությունների համար միայն քաղաքացիական օրենսգրքով սահմանված դեպքերում
բ) իրավաբանական անձի հիմնադիրը որևէ դեպքում պատասխանատու չէ իրավաբանական անձի պարտավորությունների համար
գ) իրավաբանական անձի հիմնադիրը պատասխանատու չէ իրավաբանական անձի պարտավորությունների համար բացառությամբ քաղաքացիական օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում

դ) իրավաբանական անձի հիմնադիրը պատասխանատու է իրավաբանական անձի պարտավորությունների համար միայն իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

5. Դատարանի վճռով իրավաբանական անձը կարող է լուծարվել.

ա) օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների դեպքում
բ) իրավաբանական անձի ռեդոմիցիլացման դեպքում
գ) իրավաբանական անձի սնանկ ճանաչվելու մասին վճիռ կայացվելու դեպքում
դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

6. Բանկային ավանդի պայմանագրի գրավոր ձևը պահպանված համարելու համար բանկային ավանդ մուծելը հավաստվում է.

ա) բանկային ավանդի պայմանագրի կողմ բանկից ստացված վկայագրով
բ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած վավերապայմաններ պարունակող դեպոզիտային սերտիֆիկատով
գ) բանկային ավանդի պայմանագրի կողմ բանկի սահմանած փաստաթղթով
դ) բանկային ավանդի պայմանագրի կողմ բանկից ստացված անդորրագրով:

7. Գրավը, որի առարկան անցնում է գրավառուի տիրապետմանը համարվում է.

ա) կոշտ գրավ
բ) գրավական
գ) ապրանքային գրավ
դ) գույքային գրավ:

8. Նախավճար է համարվում.

ա) դրամական գումարը կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույքը, որը պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով տալիս է պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում
բ) դրամական գումարը, որը պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով տալիս է պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում
գ) դրամական գումարը, որը պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում
դ) դրամական գումարը կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույքը, որը պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում:

9. Անձնական լիարժեք սերվիտուտը (ուզուֆրուկտը) կարող է սահմանվել հօգուտ.

ա) Հայաստանի Հանրապետության կամ համայնքի
բ) ֆիզիկական և իրավաբանական անձանց
գ) միայն ֆիզիկական անձանց
դ) միայն իրավաբանական անձանց:

10. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.

ա) Երաշխավորությունը դադարում է երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե երաշխավորը պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրել նոր պարտապանի համար
բ) Երաշխավորությունը դադարում է երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, անկախ երաշխավորի պարտատիրոջը նոր պարտապանի համար պատասխանատվություն կրելու վերաբերյալ համաձայնությունից
գ) Երաշխավորությունը չի դադարում երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով
դ) Երաշխավորությունը չի դադարում երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

11. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգ) պայմանագրով.

ա) Հաճախորդը պատասխանատվություն չի կրում ֆինանսական գործակալի կողմից զիջման առարկա համարվող պահանջը պարտապանի կատարմանը ներկայացնելու դեպքում, վերջինիս կողմից չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, եթե այլ բան նախատեսված չէ քաղաքացիական օրենսգրքով կամ հաճախորդի և ֆինանսական գործակալի միջև կնքված պայմանագրով
բ) Հաճախորդը պատասխանատվություն չի կրում ֆինանսական գործակալի կողմից զիջման առարկա համարվող պահանջը պարտապանի կատարմանը ներկայացնելու դեպքում, վերջինիս կողմից չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, եթե այլ բան նախատեսված չէ հաճախորդի և ֆինանսական գործակալի միջև կնքված պայմանագրով
գ) Հաճախորդը որևէ դեպքում պատասխանատվություն չի կրում ֆինանսական գործակալի կողմից զիջման առարկա համարվող պահանջը պարտապանի կատարմանը ներկայացնելու դեպքում, վերջինիս կողմից այն չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար
դ) Հաճախորդը պատասխանատվություն չի կրում ֆինանսական գործակալի կողմից զիջման առարկա համարվող պահանջը պարտապանի կատարմանը ներկայացնելու դեպքում,

վերջինիս կողմից չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, եթե այլ բան նախատեսված չէ քաղաքացիական օրենսգրքով:

12. Աշխատանքային պայմանագիրն ուժի մեջ է մտնում.

ա) աշխատանքային պայմանագրով ավելի ուշ ժամկետ սահմանված չլինելու դեպքում թվային համակարգի միջոցով այն գործատուի և աշխատողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու օրը
բ) աշխատանքային պայմանագրով այլ ժամկետ սահմանված չլինելու դեպքում թվային համակարգի միջոցով այն գործատուի և աշխատողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելուց հետո եռօրյա ժամկետում
գ) աշխատանքային պայմանագրով այլ ժամկետ սահմանված չլինելու դեպքում թվային համակարգի միջոցով այն գործատուի և աշխատողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելուն հաջորդող աշխատանքային օրը
դ) աշխատանքային պայմանագրով այլ ժամկետ սահմանված չլինելու դեպքում թվային համակարգի միջոցով այն գործատուի և աշխատողի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելուց հետո հնգօրյա ժամկետում:

13. Գործատուն իրավունք ունի աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ.

ա) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում
բ) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն իրականացնելու դեպքում
գ) աշխատողի կողմից այնպիսի արարք կատարելու դեպքում, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս
դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

14. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.

ա) աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելիս տասից մինչև տասնհինգ տարի աշխատելու դեպքում՝ աշխատողին վճարում է արձակման նպաստ միջին օրական աշխատավարձի երեսնապատիկի չափով
բ) աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելիս տասից մինչև տասնհինգ տարի աշխատելու դեպքում ՝ աշխատողին վճարում է արձակման նպաստ միջին ամսական աշխատավարձի երեսունհինգապատիկի չափով

գ) աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելիս տասից մինչև տասնհինգ տարի աշխատելու դեպքում՝ աշխատողին վճարում է արձակման նպաստ միջին ամսական աշխատավարձի երեսնապատիկի չափով
դ) աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելիս տասից մինչև տասնհինգ տարի աշխատելու դեպքում ՝ աշխատողին վճարում է արձակման նպաստ միջին օրական աշխատավարձի երեսունհինգապատիկի չափով:

15. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.

ա) Տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը
բ) Տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե այլ ընկերություն նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները
գ) Տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե այլ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները
դ) Տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան տասը տոկոսը:

16. Պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե

ա) թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է
բ) թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է
գ) թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է
դ) թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

17. Վարչարարության առավելագույնի սկզբունքի համաձայն.

ա) Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել
բ) Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը
գ) Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում
դ) Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով:

18. Ինչ տեսակի չի լինում վարչական ակտը.
ա) բարենպաստ
բ) ռեալ
գ) զուգորդվող
դ) միջամտող:

19. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.
ա) Իրավաբանական անձի դատվածությունը մարվում է ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 3 տարի հետո
բ) Իրավաբանական անձի դատվածությունը մարվում է ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 2 տարի հետո
գ) Իրավաբանական անձի դատվածությունը մարվում է միջին ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 4 տարի հետո
դ) Իրավաբանական անձի դատվածությունը մարվում է առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում, եթե չի նշանակվել հարկադիր լուծարում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելք՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 6 տարի հետո:

20. Հայաստանի Հանրապետությունում գործող մասնագիտացված դատարան չէ.
ա) վարչական դատարանը
բ) սնանկության դատարանը

գ) տնտեսական դատարանը
դ) հակակոռուպցիոն դատարանը:

21. Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման անկախ դրա պատճառման ժամկետից, եթե
ա) ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերությունը ծագել է դրա մասին ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով
բ) օրենքի պահանջների խախտմամբ չի ներկայացվել ապրանքի թերության հետևանքով պատճառված վնասի հատուցման եղանակների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն
գ) օրենքի պահանջների խախտմամբ ապրանքի պիտանիության ժամկետ չի սահմանվել
դ) օրենքի պահանջների խախտմամբ ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերությունը ծագել է դրա ֆունկցիոնալության մասին ոչ ամբողջական տեղեկատվություն տրամադրելու հետևանքով:

22. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.
ա) բենեֆիցիարի առջև երաշխիք տված անձի երաշխիքով պարտավորությունը դադարում է բենեֆիցիարի կողմից՝ երաշխիքով իր իրավունքներից հրաժարվելու հետևանքով՝ անկախ երաշխիքը երաշխիք տված անձին վերադարձնելուց
բ) բենեֆիցիարի առջև երաշխիք տված անձի երաշխիքով պարտավորությունը դադարում է երաշխիքով որոշված ժամկետի ավարտով անկախ երաշխիքը երաշխիք տված անձին վերադարձնելուց
գ) բենեֆիցիարի առջև երաշխիք տված անձի երաշխիքով պարտավորությունը դադարում է բենեֆիցիարին այն գումարը վճարելով, որով տրված է երաշխիքը՝ պայմանով, որ երաշխիքը երաշխիք տված անձին վերադարձվել է
դ) բենեֆիցիարի առջև երաշխիք տված անձի երաշխիքով պարտավորությունը դադարում է երաշխիքով դրամական գումար վճարելու մասին բենեֆիցիարի պահանջ ներկայացնելու դեպքում:

23. Կառուցված բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք կամ բնակելի տուն սեփականության իրավունքով փոխանցելու ակտում նշվում են.
ա) կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք կամ բնակելի տուն գնելու իրավունքի պայմանագրով փոխանցման ենթակա անշարժ գույքի մասին տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս որոշակիորեն սահմանել գնորդին՝ պայմանագրով փոխանցման ենթակա անշարժ գույքը
բ) կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի որակական և տեխնիկական և նախագծային փաստաթղթերի հիմնական բնութագրերը

գ) կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ինժեներատեխնիկական համակարգերի (էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, ջեռուցում և այլն) բնութագրերը
դ) կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի սեյսմակայունության դասի և տարածքի քաղաքաշինական գոտիավորման տեխնիկական բնութագրերը:

24. Աշխատողի նկատմամբ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն.
ա) խախտման բնույթը
բ) խախտման ծանրությունը և դրա հետևանքները
գ) խախտում կատարելու փաստն ընդունելը
դ) խախտման տևողությունը:

25. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.
ա) Ընկերակցությունն ընկերության վերակազմավորվելիս յուրաքանչյուր լիակատար ընկեր, դառնալով ընկերության մասնակից (բաժնետեր) պատասխանատվություն չի կրում ընկերակցությունից ընկերությանն անցած պարտավորությունների համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի
բ) Ընկերակցությունն ընկերության վերակազմավորվելիս յուրաքանչյուր լիակատար ընկեր, դառնալով ընկերության մասնակից (բաժնետեր), երեք տարվա ընթացքում իր ամբողջ գույքով սուբսիդիար պատասխանատվություն է կրում ընկերակցությունից ընկերությանն անցած պարտավորությունների համար, բացառությամբ նախկին ընկերոջ կողմից իրեն պատկանող բաժնեմասերի (բաժնետոմսերի) օտարման դեպքի
գ) Ընկերակցությունն ընկերության վերակազմավորվելիս յուրաքանչյուր լիակատար ընկեր, դառնալով ընկերության մասնակից (բաժնետեր), երկու տարվա ընթացքում իր ամբողջ գույքով սուբսիդիար պատասխանատվություն է կրում ընկերակցությունից ընկերությանն անցած պարտավորությունների համար, իսկ նախկին ընկերոջ կողմից իրեն պատկանող բաժնեմասերի (բաժնետոմսերի) օտարումը նրան չի ազատում նման պատասխանատվությունից
դ) Ընկերակցությունն ընկերության վերակազմավորվելիս յուրաքանչյուր լիակատար ընկեր, դառնալով ընկերության մասնակից (բաժնետեր), երեք տարվա ընթացքում իր ամբողջ գույքով սուբսիդիար պատասխանատվություն է կրում ընկերակցությունից ընկերությանն անցած պարտավորությունների համար, առանց նախկին ընկերոջ կողմից իրեն պատկանող բաժնեմասերի (բաժնետոմսերի) օտարման դեպքի բացառության:

Ընդամենը 50 միավոր

Խնդիր 1 **(15 միավոր)**

Կարեն Վարդանյանի և «Քոնսթրաքշընն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս տնօրեն Հրանտ Գրիգորյանի միջև 10.01.2019 թվականին 3 տարի ժամկետով կնքվել է թիվ 05 որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը (այսուհետ նաև՝ **Պայմանագիր**):

Պայմանագրի 1.2.-րդ կետի համաձայն՝ Կարեն Վարդանյանը զբաղեցնում է Ընկերության «Արևելյան» շրջանի արտադրատեխնիկական տեղամասի առաջին կարգի ճարտարագետի հաստիքը:

10.01.2021 թվականին Կարեն Վարդանյանի և Ընկերության միջև կնքել է «Թիվ 05 աշխատանքային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» LO-01 համաձայնագիրը, որի 1.3.-րդ կետի համաձայն՝ Կարեն Վարդանյանը նշանակվել է Ընկերության «Արևելյան» շրջանի արտադրատեխնիկական տեղամասի ավագ ճարտարագետի հաստիքում:

05.06.2021 թվականին Կարեն Վարդանյանի և Ընկերության միջև կնքել է «Թիվ 05 աշխատանքային պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» LO-02 համաձայնագիրը, որի 1.4.-րդ կետի համաձայն՝ Կարեն Վարդանյանը նշանակվել է Ընկերության «Արևելյան» շրջանի արտադրատեխնիկական տեղամասի գլխավոր ճարտարագետի հաստիքում:

Ընկերության տնօրեն Հրանտ Գրիգորյանի նախաձեռնությամբ 20.08.2021 թվականին հաստատվում է Ընկերության աշխատանքների նոր ռազմավարական ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում էր փոփոխություն կատարել Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքում և հաստիքացուցակում, ի թիվս այլնի, երկու հաստիքով ընդլայնելով նաև Ընկերության «Արևելյան» շրջանի արտադրատեխնիկական տեղամասի ճարտարագետների քանակը:

Կարեն Վարդանյանը, անձնական հակակրանք ունենալով Ընկերության տնօրեն Հրանտ Գրիգորյանի նկատմամբ, ինչպես նաև համակարծիք չլինելով «Արևելյան» շրջանի արտադրատեխնիկական տեղամասի ճարտարագետ աշխատակիցների հաստիքը ավելացնելու Ընկերության մտադրության հետ, 25.08.2021 թվականից մինչև 04.09.2021 թվականը չի հաճախում աշխատանքի՝ չներկայացնելով այդ կապակցությամբ որևէ հարգելի պատճառ:

20.12.2021 թվականին Ընկերությունը ծանուցում է Կարեն Վարդանյանին այն մասին, որ իր հետ 10.01.2019 թվականին կնքված թիվ 05 աշխատանքային պայմանագիրը 11.01.2022 թվականից համարվելու է լուծված՝ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով:

11.01.2022 թվականին Ընկերությունը թիվ Ա-026 «10.01.2019 թվականին թիվ 05 աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» հրամանով լուծում է Կարեն Վարդանյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պատճառով:

Կարեն Վարդանյանը դիմել է դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել Ընկերության 11.01.2022 թվականի Ընկերության թիվ Ա-026 հրամանը՝ նշելով, որ այն ընդունվել է օրենքի խախտմամբ:

Հարց 1. Ներկայացրեք որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները: (5 միավոր)

Հարց 2. Արդյո՞ք Ընկերությունը կարող էր Կարեն Վարդանյանի հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր: Հիմնավորեք Ձեր պատասխանը: (5 միավոր)

Հարց 3. Ներկայացրեք գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը: Արդյո՞ք տվյալ դեպքում առկա է թիվ 05 աշխատանքային պայմանագիրը լուծելու որևէ հիմք: (5 միավոր)

Խնդիր 2 **(10 միավոր)**

Ռուբեն Մաթևոսյանը Երևանի Ամիրյան փողոցի 8-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի նկատմամբ ունի ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 5612511230035 վկայականով հավաստվող սեփականության իրավունք: Ռուբեն Մաթևոսյանի հետ Երևանի Ամիրյան փողոցի 8-րդ շենքի թիվ 24 հասցեում բնակվում է նաև արտերկրում գտնվող ընկերոջ՝ Արտաշես Ալեքյանի դուստրը:

Ռուբեն Մաթևոսյանը ընկերոջ՝ Արտաշես Ալեքյանի հետ հանդիպման ընթացքում վերջինիս հայտնում է, որ ցանկություն ունի իրականացնելու բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքներ, սակայն չունի բավարար միջոցներ:

Արտաշես Ալեքյանը հայտնում է, որ կարող է ձեռք բերել տարբեր տեսակի շինարարական ապրանքներ և ապահովել բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքների կատարումը առավել մատչելի արժեքով:

Բնակարանի վերանորոգման աշխատանքների ավարտից հետո Արտաշես Ալեքյանը Ռուբեն Մաթևոսյանին խնդրում է փոխանցել վերանորոգման գումարը, որպիսի պահանջը վերջինիս կողմից չի ընդունվում:

Արդյունքում Արտաշես Ալեքյանը դիմում է դատարան՝ պահանջելով Ռուբեն Մաթևոսյանից բռնագանձել 20.000.000 դրամ՝ որպես անհիմն հարստացում: Դատարանի կողմից նշանակված փորձաքննության արդյունքում «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրվում է եզրակացություն, որի համաձայն՝ բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքների կատարման արժեքը կազմում է 10.000.000 ՀՀ դրամ:

Ռուբեն Մաթևոսյանը դատարանում հայտնում է, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևանի Ամիրյան փողոցի 8-րդ շենքի թիվ 24 հասցեի բնակարանի կապիտալ նորոգման աշխատանքները հիմնականում կատարվել են Արտաշես Ալեքյանի կողմից և ինքը դեմ չի եղել վերանորոգմանը՝ այն համարելով որպես վերջինիս դստերը բնակության վայր տրամադրելու դիմաց նվեր: Նա նշել է, որ պարտավորություն չի ստանձնել գումարը վերադարձնելու համար և միայն հուզական վիճակում է ասել, որ կվերադարձնի վերանորոգման գումարը:

Հարց 1. Ներկայացրե՛ք անհիմն հարստացումը վերադարձնելու պարտականության բովանդակությունը, այն բնեղենով վերադարձնելու կամ դրա արժեքը հատուցելու առնչությամբ օրենսդրական կարգավորումները: (4 միավոր)

Հարց 2. Ներկայացրե՛ք չվերադարձվող անհիմն հարստացման առնչությամբ օրենսդրական կարգավորումները: (2 միավոր)

Հարց 3. Արդյո՞ք հիմնավոր է Արտաշես Ալեքյանի դատարան ներկայացրած պահանջը: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: (4 միավոր)

Խնդիր 3 **(15 միավոր)**

«Սաութ» ՍՊԸ-ի տնօրեն Զարուհի Մկրտչյանի և Կորյուն Գրիգորյանի միջև 24.05.2022 թվականին ձեռք է բերվում համաձայնություն Ընկերությանը պատկանող Արագածոտնի մարզի Եղիպատրուշ թիվ 7 հասցեում գտնվող թիվ 08-077-0204-0005 կադաստրային համարով 0.68հա մակերեսով հողամասը 30.000.000 դրամով գնելու վերաբերյալ:

01.06.2022 թվականին Ընկերության, ի դեմս տնօրեն Զարուհի Մկրտչյանի, և Կորյուն Գրիգորյանի միջև կնքվում է թիվ ԱԼ-2563 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ նաև՝ **Առուվաճառքի պայմանագիր**), որի հիման վրա Ընկերությունը (վաճառող) 30.000.000 դրամով Կորյուն Գրիգորյանին (գնորդ) վաճառում է Արագածոտնի մարզի Եղիպատրուշ թիվ 7 հասցեում գտնվող թիվ 08-077-0204-0005 կադաստրային համարով 0.68հա մակերեսով հողամասը:

Առուվաճառքի պայմանագիրը ստորագրվում է վաճառողի և գնորդի կողմից, որից հետո ձեռք է բերվում պայմանավորվածություն այն մոտ օրերս նոտարական կարգով վավերացնելու և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու վերաբերյալ:

Կորյուն Գրիգորյանն օրենքով սահմանված կարգով պայմանագրի գինը վճարում է Զարուհի Մկրտչյանի կողմից տրված և Առուվաճառքի պայմանագրով նշված բանկային հաշվեհամարին:

Ընկերության զուտ ակտիվների արժեքը Առուվաճառքի պայմանագիրը կատարելու պահին կազմել է 41.000.000 ՀՀ դրամ:

03.06.2022 թվականին Կորյուն Գրիգորյանը կապվում է Զարուհի Մկրտչյանի հետ՝ գործարքի նոտարական կարգով վավերացումն իրականացնելու վերաբերյալ վերջնական պայմանավորվածության գալու համար, սակայն Զարուհի Մկրտչյանը որևէ դիրքորոշում չի հայտնում: Հետագայում Կորյուն Գրիգորյանը կրկին փորձեր է կատարում Զարուհի Մկրտչյանի հետ կապ հաստատելու համար, սակայն ապարդյուն:

15.08.2022 թվականին Ընկերության հերթական ընդհանուր ժողովի ընթացքում տնօրեն Զարուհի Մկրտչյանը գործարքի կնքումը բացատրում է նրանով, որ ըստ իր ստացած տեղեկության՝ Ընկերության դեմ ներկայացվելու է մեծ նյութահիրավական պահանջով հայց, որի

շրջանակներում կարող էր արգելանք դրվել նաև վիճելի հողամասի վրա, ինչի արդյունքում հնարավոր չէր լինի կառավարել այն:

Կորյուն Գրիգորյանը կրկին դիմում է Զարուհի Մկրտչյանին Առուվաճառքի պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու և ի վերջո գույքն իր տնօրինությանը հանձնելու պահանջով, ինչին ի պատասխան Զարուհի Մկրտչյանը մերժում է Կորյուն Գրիգորյանի պահանջը՝ նշելով, որ Առուվաճառքի պայմանագիրը չի համապատասխանում օրենսդրական պահանջներին և իրավական հետևանքներ չի կարող առաջացնել:

1) Ներկայացրե՛ք անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման կարգը և պայմանները, այն չպահպանելու արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները: (5 միավոր)

2) Արդյո՞ք Ընկերության և Կորյուն Գրիգորյանի միջև 01.06.2022 թվականին կնքված թիվ ԱԼ-2563 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը վավեր է և ի՞նչ իրավական հետևանքներ է առաջացնում: Արդյո՞ք Կորյուն Գրիգորյանը կարող է գործարքը վավեր ճանաչելու պահանջ ներկայացնել: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: (5 միավոր)

3) Արդյո՞ք Ընկերության ընդհանուր ժողովը կարող է վիճարկել առուվաճառքի պայմանագիրը: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: (5 միավոր)

Խնդիր 4 (10 միավոր)

Լիդա Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանում է Ավանի 7-րդ փողոցի թիվ 84/1 բնակելի տունը և կից 45քմ օժանդակ շինությունը: 2003 թվականին Լիդա Սարգսյանը վիճելի բնակարանի և օժանդակ շինության մասին հոգ տանելու խնդրանքով դիմում է եղբորը՝ Վահե Մարտիրոսյանին, ինչպես նաև վերջինիս տրամադրում է գույքի օգտագործման համար անհրաժեշտ բոլոր պատկանելիքները՝ թույլատրելով նրան բնակվել վիճելի հասցեում, քանի որ ինքը մեկնում էր ԱՄՆ:

28.02.2003 թվականին Վահե Մարտիրոսյանը իր ընտանիքի անդամների հետ բնակություն է հաստատում վիճելի հասցեում, իսկ 10.05.2004 թվականին ինքը, կինը և երկու երեխաները հաշվառվում են Ավանի 7-րդ փողոցի թիվ 84/1 հասցեում:

Վահե Մարտիրոսյանը, հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերը հավաքագրելիս, պարզում է, որ Ավանի 7-րդ փողոցի թիվ 84/1 բնակելի տանը կից առկա 45քմ օժանդակ շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց, սակայն ընդհանուր գույքի նկատմամբ սեփականության կամ այլ իրավունքներ չունենալու պայմաններում չի կատարում որևէ գործողություն գույքի օրինականացման կապակցությամբ:

28.02.2003 թվականից ի վեր վիճելի հասցեում բնակվել են միայն Վահե Մարտիրոսյանը և իր ընտանիքի անդամները, հոգ են տարել գույքի մասին, պաշտպանել այն երրորդ անձանց ոտնձգություններից: Ավելին՝ 2008 թվականին Լիդա Սարգսյանի համաձայնությամբ հիմնովին

վերանորոգել են բնակելի տունն ու օժանդակ շինությունը և ամբողջովին նոր գույքով կահավորել այն:

2024 թվականին Վահե Մարտիրոսյանը ցանկանում է վաճառել Ավանի 7-րդ փողոցի թիվ 84/1 բնակելի տունը և կից 45քմ օժանդակ շինությունը, սակայն սեփականության իրավունք չունենալու պատճառաբանությամբ գործարք կնքել չի կարողանում, ինչից հետո դիմում է քրոջը՝ Լիդա Սարգսյանին, սեփականության իրավունքն իրենց փոխանցելու խնդրանքով, սակայն Լիդա Սարգսյանը մերժում է՝ պնդելով, որ գույքն իրեն է պատկանում:

02.09.2024 թվականին Վահե Մարտիրոսյանը դիմում է դատարան Ավանի 7-րդ փողոցի թիվ 84/1 բնակելի տունը և կից 45քմ օժանդակ շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով:

1) Ներկայացրե՛ք ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ օրենսդրական կարգավորումները: (2 միավոր)

2) Արդյո՞ք Վահե Մարտիրոսյանի մոտ առկա են ձեռքբերման վաղեմության ուժով Ավանի 7-րդ փողոցի թիվ 84/1 բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: (5 միավոր)

3) Արդյո՞ք ձեռքբերման վաղեմության ուժով կարող է ճանաչվել սեփականության իրավունք Ավանի 7-րդ փողոցի թիվ 84/1 բնակելի տանը կից առկա 45քմ օժանդակ շինության նկատմամբ: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: (3 միավոր)